

հորիզոնի վերայ և մարդու կրծքի տակ խօսում և եթէ մարդիկ տեսնել ու լսել չեն ուզում, պատճառն այն է միայն որ «չարութեան են գործք իւրեանց» չար հակումներ, չար գործեր փակում ու խանգարում են նոցա տեսողութիւնը:

Եւ մարդիկ զգում են այդ, զգում են, որ իրենք դէպի ճշմարտութիւն կոչուած են և հասնել կարող են նորան, եթէ հոգեով սրտով հետամուտ լինին. զգում են, որ լուսով շրջապատուած են և կարող են լուսոյ մէջ քայլել շարունակ, եթէ վայր ձգեն թանձր փականքները աչքի վերայից, որ խաւարը սիրելի են դարձնում: Դեռ Բ. դարում նշանաւոր Տրայանոս կայսրը իւր գործակալ Պիլոնիոսին զրաժ նամակի մէջ քրիստոնեաների մասին ասում էր. այս լուսաւորեալ ժամանակ մեզ վայել չէ բանաստեղծների միջոցաւ նոցա որոնել և դատի ենթարկել: «Վայել չէ լուսաւորեալին, մեր լուսաւորեալ դարում» — այսպիսի խօսքեր մենք ևս յաճախ լսում ենք և կրկնում այն զիտակցութեամբ, որ լուսոյ որդիք լինելու և կոչուելու համար ազատ պէտք է լինել որոշ արատներից, մարդկային արժանապատուութիւնը ձգող խաւարային միտումներից և սովորութիւններից: Սակայն ամէն օր ամէն ժամ մեր աչքի առաջ տեղի են ունենում իրողութիւններ, որոնք ապացուցանում են, թէ ներկայումս քաղաքակրթութիւնը աշխարհի պարծանք կազմող լուսաւորութիւնը չէ ազատում մարդուն այդ արատներից: Ծա բարձրագոյն ճառեր է ասում լուսաւորութեան մասին հազար ու մի եղանակներով ազատարար ու երջանկաբեր լուսոյ գովքն է անում: Բայց շարունակում է խաւարային գործեր և խաւարային բարքեր երեւան հանել: Այստեղ ևս նա զիտէ ձորպիկ կերպով ամէն բան իւր հաճոյքին յարմարեցնել՝ այն բարձր, որին պէտք է վեր մագլցելով հասնել ձգտել, իջեցնել, գետնի վերայ քաշ տալ, իւր մօտ բերել: 2^{րդ} որ նա պարծենում է, 2^{րդ} որ նա պարծենում է, թէ լուսաւորութիւնն էլ ինքն է ստեղծել, իւր հանձնարեղ մտքի ծնունդ են ոչ միայն զիտութիւն և արուեստ, այլ և կրօն, բարոյականութիւն, ամէն մի վսեմ ու ազնիւ գա-

ղափար: Ի՞նչ զարմանք ուրեմն, որ նա իւր քմայ համաձայն բացատրութիւն տայ դոցա բոլորին՝ գործադրել, ինչպէս անձնիշխան կամքը պահանջում է: Բայց եթէ մենք ճանաչում ենք մի լոյս, որ վերեւից է գալիս և մեր առաջնորդը պէտք է լինի դէպի վեր՝ չենք կարող լինել և գործել այնպէս, որ ամաչենք և երկիւղ կրենք այդ լուսոյ առաջ երեւալու: Առաքեալը մեղ ասում է՝ ի՞նչ պայմանների մէջ ճշմարիտ լուսոյ որդիք կրկոչուենք, ինչպէս պէտք է լինեն այդ լուսով լուսաւորեալի պատգնները՝ բարութեամբ, արդարութեամբ, ճշմարտութեամբ: Եւ դոքա պակասում են՝ ամենամեծ զիտութիւնն ու ամենաճարտար արուեստը ճշմարտապէս լուսաւորեալ մեզ դարձնել չեն կարող: Որ ասե՛ք եթէ ի լոյսն իցէ, և զեղբայր իւր ատիցէ՛ սո՛ւս է և ի խաւարի է տակաւին:

Գ. Վ.



ԱՐԵՒՄՏԵԱՆ ԿԱՄ ԿԱԹՈՒԼԻԿ ՎԱՆԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ *.

ՈՐՔԱՆ և քրիստոնէական եկեղեցիները դաւանութեամբ և վանական կազմակերպութեամբ սարբեր լինին, այնուամենայնիւ այն հայեցակէտը ունին, թէ հաւատքը ամենուրեք քրիստոնէական կեանքում պէտք է իրականաց և պատկերանայ թէ իսկական քրիստոնէութիւն կարող է մի միայն այնտեղ գոյութիւն ունենալ, ուր նա իւր համար «Եղհակն Էլան» է ստեղծել: Քրիստոնէական եկեղեցիների բաժանումը յառաջ է եկել ոչ միայն աստուածաբանական վիճարանութեանց,

* Անցեալ օտի «Արարատ»-ում լոյս տեսած Օրթոդոքս կամ արեւելեան վանականութեան պատմութեան իրեւզագիշտ յառաջ եմք թերում հռչակաւոր ուսուցչապետ Աղոյժ Հարմակի գրութիւններէն յոյսադրութիւնը: Նորա դասախօսութիւնը կրում է Das Mönchthum, Seine Ideale & seine Geschichte վերնագիրը: Մեմ օգտուեմ եմք այդ գրութեմի 4-րդ հրատարակութիւնից (gütsel. 1895): Այս յօդուածին կնեւելի ասորի վանականութեան պատմութիւնը և այսպէս հայ վանականութիւնը:

քահանայապետական իշխանապետութեան կամ արգայնական հակադրութեանը շնորհիւ, այլ և բրեւաբանական կենսական վերոյիշեալ հարցին տրուած տարբեր պատասխանների պատճառով: Կենսաբանական առանձնատեսակի գաղափարն է, որ եկեղեցիների բաժանման պարունակութիւնն է տուել և նրան տեական դարձրել: ԴՆԶ-ի անհատներին, նոյնպէս և համայնական մարմիններին՝ միացնում կամ բաժանում են ոչ թէ տեսական կարծիքները, այլ մտքի և կամեցողութեան որոշ ուղղութիւնները:

Կաթոլիկ և օրթոդոքս եկեղեցիները կապաւորեալ քրիստոնէական կենսաբանական հասկանում են Աստուծոյ պաշտաման նուիրուած այնպիսի մի կենսական, որը հրաժարուում է աշխարհային ամեն բարեբաղից, սեպհականութիւնից, ամուսնութիւնից, անհատական կամք և պատիւ ունենալուց, մի խօսքով՝ փախուստ աշխարհից կամ կրօնաւորութիւն: Ծնմարիտ վանականը՝ նրանց կարծիքով, ծնմարիտ և կատարեալ քրիստոնեան է: Ուրեմն վերոյիշեալ եկեղեցիներում վանականութիւնը մի պատահական երեւոյթ է, այլ արդիւնք աւետարանի դարերով տեղող որոշ ըմբռնման, վանականութիւնը այդ եկեղեցիների էութեան համապատասխանող մի հաստատութիւն է: — Եւստիքիոս Բրեւաբանական պատմութիւն է: Այդ պատճառով կարող ենք վստահ լինել, որ վանականութեան գաղափարներն ու պատմութիւնը, նոյն եկեղեցու գաղափարներն ու պատմութիւնն են ներկայացնում:

Բայց կարող է վանականութիւնը փոփոխական գաղափարներ՝ այսինքն պատմութիւն ունենալ, դատապարտուած չէ՞ նա հազարաւոր անգամ կրկնուող միակերպութեամբ պատմութեան մէջ հանդէս գալու: ԴՆԶ փոփոխութիւն կարող են կրել աղքատութեան, ամբողջութեան, վճռական աշխարհայեցման գաղափարները: ԴՆԶ-ի պատմութիւն կարող են ունենալ կամ յառաջացնել նրանք, որոնք աշխարհից և նրա փոփոխող կերպարանից՝ պատմութիւնից, երես են դարձրել: Աշխարհայեցումն միաժամանակ ամեն տեսակի վարդապետից և պատմութիւնից հրաժարուել չէ՞ կամ եթէ նա իրականութեան մէջ այդպէս չէ եղել, մի դառն բողոք չէ՞ ինքն ըստ

ինքեան վանականութեան գաղափարների պատմութիւնը՝ նրա դաւանած սկզբունքների դէմ: Այս բոլոր հարցերի պատասխանը տալիս է մեզ արեւմտեան վանականութեան պատմութիւնը: Վանականութիւնը ունեցել է իւր ոչ միայն արտաքին այլ և ներքին պատմութիւնը՝ լի մեծամեծ փոփոխութիւններով և գործերով: ԴՆԶ-ի խոր վիճ է բաժանում անապատի այն լուսամուկը ապաշխարողին՝ որ տասնեակ տարիներ մարդու երես չէ տեսել՝ այն վանականից, որ ամբողջ մի մեծ տէրութեան հրամաններ է տալիս և այդ 2 հազարամյակների մէջ, վանականի հազարաւոր այլ տիպեր են շարժում: Բոլորն ևս աշխարհից հրաժարուելու գաղափարով սողորուած: Բայց աւելի ևս հոգու ամեն տեսակի արտադրութիւններ՝ մոլեկանից մինչև ամենաբնորոշ, հանդէս է բերել աշխարհայեցման այս նոր աշխարհը: Այնտեղ մշակուել են արուեստների, բանաստեղծութիւն և գիտութիւնների, այն մինչև անգամ մեր հայրենիքի քաղաքակրթութեան սկզբնաւորութիւնը՝ վանականութեան պատմութեան մի գլուխն է: Արդեօք վանականութիւնը իւր գաղափարները թողնելով կարողացաւ այս բոլորը յառաջացնել թէ դոքա իւր սեպհական գաղափարների արդիւնքն էին միայն: Ստեղծել է վանականութիւնը հինն նման մի նոր աշխարհ և պատմութիւն, միայն աւելի մաքուր և հոյակապ թէ՞ նա աշխարհը անապատ է դարձրել: Եւստիքիոս վանականը, որ աշխարհը Աստուծոյ տաճար է համարում և լուսկեաց բնութեան մէջ հոգեղմայլ՝ Աստուծոյ հոգու շնչումն է լսում թէ՞ նա՞ որ աշխարհը իւր բնութեամբ և իւր պատմութեամբ սատանայի գործ է համարում: Այս երկու վիճերն ևս լսուում են աշխարհից հրաժարուածների թաղաւորութիւնից: Ո՞րն է դրանցից իրաւացին և պատմականօրէն արդարացին:

Վանականութեան մէջ երբեմն անհատը երեւում է ընկերութեան և սովորութեան կապերից բոլորովին ազատ, ինքնուրոյնութեան մարդասիրութեան և բարձր աստիճանների հասած և երբեմն ընդհակառակը՝ նեղսիրտ, անհոգի անապատացած, ստրուկ անդոյն մի էակ: Ո՞րն է սկզբնական գաղափարի իսկական արդիւնքը:

Այսպիսի և նման հարցեր են երևան գալիս այստեղ: Պակական քրիստոնեան բացի պատմական հետաքրքրութիւնից, որով այս խնդիրները պէտք է պարզել (մանաւանդ եթէ համոզուած է որ քրիստոնէական կատարելութիւնը վանականութեան մէջ չպէտք է փրնտուել) պարտաւոր է այդ փորձել և նրա լուսաւոր պատկերը ունենալ իւր աչքի առաջ: Վանականութիւնը կարելի է միմիայն այն ժամանակ նուաճել, երբ նրա լուսի գէտ մի լուսաւորչն սկզբունք կը դուրս: Ով որ առանց այդ լուսի ճանաչելու անհոջ մոռացութեան է տալիս, նա չի կարող վանականութիւնը գրնահատել: Ով նրան ճանաչում է, գիտէ, թէ զեռ շատ բան նրանից սովորել կարելի է՝ կարելի է սովորել այնպէս՝ ինչպէս մի բարեկամից, առանց իւր աւետարանական հայեացքները փնտրելու: Դանք այժմ՝ վանականութեան պատմութեան:

Ե. Թուիչեան.



ՊԱՆԳ. ԻԿԵԱՆՅ ԵՒ ԹԱՆԴԻՐԱԿԵՑԻՈՅ ԱՂԱՆԴՆԵՐԸ ԱՐԴԻ ՔՆՆԱԿԱՆՈՒԹԵԱՄԵ:

1895 թ. Արարատի յունուար համաժողովի մէջ մի յօդուածով տեղեկութիւն էին տուել «Մճղնից աղանդի» մասին խոստանալով ի հարկին ծանօթացնել Հայաստանում եղած այլ և այլ աղանդաւոր երեւոյթների հետ որոնց մայր մենք համարել ենք «մճղնութիւնը» և որոնք մեր ուսումնասիրութեան նիւթն են եղել Die Paulikianer im Byzantinischen Kaiserreiche und verwandte ketzerische Erscheinungen in Armenien—զերմաներէն գրուածքում: Այստեղ մենք հրապարակ էինք հանել այն տեսութիւնը, թէ մեր մատենագրութեան մէջ յիշուող «Մճղնայ» նոյն աղանդաւորներն են, որոնք յայտնի են ընդհ. եկեղեցւոյ պատմութեան մէջ Բուլղար անունով և նոյնանոյն են յառաջացել այն Պաղիկեանները որոնց մասին գրել է Եովհան Օճնեցին Պրոֆ. Գեյցեր և ուրիշ քննադատներ հաւանութիւն տալն այդ տեսութեան և Պաղիկեան աղանդը որ մեր

գարի սկզբում շատ էր զբաղեցրել եկեղ. պատմիչներին, բայց երկար ժամանակ առանց ուշադրութեան էր մնացել կրկին քննադատութեան առարկայ դարձաւ: Յախ քան մեր գրուածքի լոյս տեսնելը՝ այս աղանդի մասին վերջին խօսքն առած համարում էր զերմանացի նշանաւոր պատմագէտ Գիլլէր, մի առանձին ուսումնասիրութեամբ, որ լոյս է տեսել 1828 թ. ին Theol. Studien und Kritiken թերթում: Գիլլէրի աչքի առաջ էր ունեցել գրեթէ մինչև այժմ յայտնի եղած բոլոր յունական աղբիւրները, և Հայաստանի Պաղիկեանների մասին թէ նա և թէ նորա հետեւողները տեղեկութիւն ունեին Օճնեցու երկասիրութիւնների լատիներէն թարգմանութիւնից. բայց ոչ որ չէր փորձել համաձայնեցնել այդ երկու կարգի միմեանցից բոլորովին տարբեր բնաւորութիւն ունեցող աղբիւրները: Մենք փորձեցինք այդ անել՝ ցոյց տալով նախ որ յունարէն աղբիւրների մէջ ամենից կարեւոր և նախնականը Գիլլէրի հրատարակած, բայց բոլորովին բարձի թողի եղած մի համառօտ յիշատակարան է, որ միւս բոլորի համար իբրեւ աղբիւր և հիմք է ծառայել, և նորա հաղորդածը պէտք է համարել միակ հարազատ և ստոյգ նկարագրութիւն Պաղիկեան աղանդի, ապա որ այս տեղ նկարագրած Պաղիկեանները ուրիշ ոչինչ են, բայց եթէ անմիջական հետեւողներ Մարկիոնի աղանդի, հետեւաբար Օճնեցու նկարագրած Պաղիկեանները բոլորովին տարբեր ծագում են ունեցել և ապա ժամանակի ընթացքում շփուել են այդ աղանդաւորների հետ և նոցա հաղորդել իրենց անունը՝ գուցէ, և հետզհետէ փոխ են առել միմեանցից ուսմանը և սովորութիւններ: Այսպիսի զուգորդութիւններից պատմական նոր պայմանների շնորհիւ յառաջ են եկել յետոյ միջնադարեան աղանդները՝ Հայաստանում Թոնկրակեցիք, Բալիանեան թերակղզու վերայ Բողոմիլները, Եւրոպայում Կաթարները, Ալբիգեանք և ին:

Այնուհետև լոյս տեսաւ 1896 թ.-ին Պրոֆ. Փրիլլէրի մի ուսումնասիրութիւնը*,

* I. Eriedrich. Bericht über die Paulikianer, Sitzungsberichte der k. b. Akademie der Wissenschaften zu München, 1896. Heft I.